



ներուն վրայ և կրնայ զանոնք գոցել, բայց բնականապէս կընէ: Մեզի, զինուորներու կաշկանդել կուտայ, իսկ պետերուն լիազօր իշխանութիւն: Ուրիմն ան է միակ պատասխանատուն, և մենք զայն պիտի դատենք: Յարը մեր ուժին, մեր արեանը պէտքը ունի-իր յաղթութիւնը աւելի փայլուն դարձնելու համար: Մեր պէտքը ունի Չինաստանցիները թաղելու և հաճոյսի ճամբորդութիւն մը ընելու համար:

Մեր պէտքը ունի նաև գործադուր ընող բանուորները ճնշելու: ապատմը գիւղացիները սպաննելու, և մեծատուններու կեանքերը և հարստութիւնը պաշտպանելու համար: Ուրիմն Յարը միայն մեծատուններու համար է: Մեզի-միացեալներու համար բաւարար մը: Ան մեր պետերուն և հարուստներուն բարեկամն է, իսկ գիւղացիներու, գործաւորներու և զինուորներու թշնամին է:

Ռուս ժողովուրդ, մենք ամենքս ալ խեղդուած ենք, ամենքս ալ աղքատութենէ ճզմուած: մենք հազիւ մեր գոյութիւնը քարշ կուտանք, չենք ուտեր մեր քաղցը յագեցնելու չափ: կը տեսնենք որ գործաւորները և գիւղացիները կ'ապստամբին, պատճառը ան է որ այլ եւս չեն կրնար դիմանալ: Անոնք քիչ մը հաց և քիչ մը ջուր ալ ապատուութիւն կուզեն:

Մեր պետերը և հարուստները սարսափած են, բայց առ այժմ անոնք մեզի զինուորներէն իրենց պաշտպան ունին: Մենք հաճութիւն պիտի տանք հարուստներուն նոյն գիւղացիները որոնց հողերը խլած են մեծատունները, պիտի հարուստենք այն գործաւորները որոնք իրենց տէրերուն համար միլիոններ կը շահին: իսկ իրենց համար սանտիմներ:

Եւ այդ պիտի ընենք մեր պետերուն, նախարարին և Յարին հրամանով: Հարուստները պաշտպանելու համար մենք կը հարւածենք մերայինները: Կըսեն որ զինուորը հայրե-

նիքին և Յարին պաշտպանն է, բայց հայրենիքը կը կազմէ ամբողջ ռուս ժողովուրդը:

Սակայն մեզի կը հրամայեն կրակել ժողովրդին վրայ, և այդ կընեն Յարին հրամանով: Այս հրամաններուն հպատակուելով է որ մենք տանջանք կը պատճառենք մեր եղբայրներուն և մեզի: զինուորներուս: Այս հրամանով էր որ մենք գացինք Չինացիները ջարդելու, որոնք մեզի բան մը ըրած չէին:

Մենք չարաչար կը խարտինք: մենք ոչ թէ Յարը պիտի պաշտպանենք, այլ ժողովուրդը ջարդին դէմ: ոչ թէ հարուստները պիտի պաշտպանենք այլ գիւղացիները և գործաւորները: Ուժը մենք կը կազմենք: բայց այդ ուժը ժողովուրդին թշնամունքով օգտին . . .

«ԲԱԶՄԱՎԵՊ»ԷՆ .

Շուտով Ս. Պետրբուրգում լոյս կը տեսնի երաժշտական գեղարուեստական պատկերազարդ շքեղ մի Պլյուս (ժողովածու) մեծանուն ծովանկար Յ. Կ. Այլապովսկու անմոռաց յիշատակին նուիրուած պ. պ. Պ. Օբրոյանցի և Ե. Բալդասարեանցի հրատարակութեամբ: Յարգելի եռանդոտ երկրասարգներ իրական բուն նպատակն է, նախ հայ ժողովրդի գեղարուեստական ճաշակը շարժողունը: Երկրորդ հայկական գեղարուեստական և երաժշտական ճիւղերի ծաղկման նըպատակ և երրորդ մի շարք հայ գործիչներ իր անուններն անմահացնել ընթացող հայ հասարակութեան մէջ:

կուլտուրայի մէջ: Հաշակաւոր ծովանկար Յ. Կ. Այլապովսկու յիշատակին նուիրուած այս Ալյուսի բովանդակութիւնը խիստ շահեկան և հետաքրքրական պիտի լինի ամեն մի ընթացողի հայի համար, որի բովանդակութիւնը պիտի լինի: 1) լիակատար կենսագրութիւն ծովանկար Այլապովսկու, 2) Թ. Գարի նկարչութեան վիճակը Ռուսիայում: 3) հայկական երաժշտութիւնը Թ. Գարու և 4) յուշիկներ հայոց երաժշտութեան անցեալի, ներկայի և ապագայի մասին: Թ. Գ. Գարի հայոց մի շարք երաժիշտներ, գործիչներ ի հեզիմակներ մասին լուսատիպ պատկերներով ամփոփ կենսագրական տեղեկութիւններ: Պատկերներ: փորագրութիւնը յանձնուած է արտասահմանի յայտնի փորագրիչներին: Բաժանորդագրին է ամեն մի օր. 2 ռուպլի 50 կոպէկ առանց կողմի և ճանապարհի ծախքի: փառակազմ 3 ռուպլի 50 կոպէկ, իսկ տպագրութիւնից յետոյ՝ 3 ռուպլ. 50 կոպէկ և 5 ռուպլի 50 կոպէկ: Հասցէ՝ Ս. Պետրբուրգ Գոլոբով 0-7 լի. 10. թիւ 54 Գ. Օբրոյանց:

Խնարհալար կը խնդրէի արտագահմանի մեծարգոյ խմբագիրներին և հրատարակիչներին, որ յիշեալ երկրորդ շնորհ անէին արտաստիպ իրենց հրատարակութեանց էջերում, որով մեծապէս նպաստած և քաջալերուած կը լինէին հայ ուսանող երկու երկրասարգներ ի սկսած գեղեցիկ գործին: Գեղարուեստի սիրահար: Ի Հայ

ՌՈՒՍԻԱ

ՆՈՐ ԽՈՒՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Ինթերպուրկէն Ռիւթերի գործակալութեան կը հաղորդեն թէ Գոն գետի վրայ գտնուող Ռուստով քաղաքի մէջ լուրջ խռովութիւններ տեղի ունեցեր են, բազմաթիւ գործաւորներ յարձակեր են դանապան գործարաններու վրայ բոլորովին աւերել են և մեքենաներն ալ կտորտել են: Նոյն միջոցին գիւղացիները յարձակեր են հարուստ կալուածատէրերուն տուններուն և կալուածներուն վրայ և ամեն բան քարուքանդ ըրեր են:

Այդ խռովութիւններուն առաջնորդները ուրիշ տեղերէ ելկեր են զիրենք Յարին կողմէն զրկուած մարդիկ ներկայացնելով:

Խոսովութեան տեղերը զինուորներ կուգան կարգը վերահաստատելու համար, որուն պատճառով ապստամբներն շատերը կը վերաբերուին: Մտրու հարաւային Ռուսիոյ և կովկասի բարձրագոյն շրջանակները մեծ սարսափի մէջ են:

«Տէլը Էրսերէս» անգլիական թերթը Ինթերպուրկէն կ'մանայ որ հիւսիսային կովկասի բնակիչներուն և իշխանութեանց միջեւ լուրջ ընդհարումներ տեղի ունեցեր են: Մեծ կաշուածատէրերը սարսափահար եղած են, և շատերը կուզեն փախչիլ որովհ. քաղաքներու մէջ տարած

ԲԱՆՍՈՒՐԱԿԱՆ

ՎԵՐԱԾԻՆ

ՄԱՍ Ա.

ԳԼՈՒԽ Գ.

Երեք օր էր անցել Մալիկիանի այցելութիւնից: Չորրորդ օրը երեկուտան դէմ Հեղինէն իր սենեակում նստած երազում էր. նրա ձեռքից վար էր ընկել կիսատ գործվածքը: Արեգակի երկկոյնան թոյլ ճառագայթները ընկել էին նրա սեւ, փարթամ մազերի վրայ, եւ կրակոտ շագանակագոյն աւել: Նա մտածում էր Մալիկիանի մասին:

—Այսօր չորս օր է եւ չեկաւ. երէկ տէրախնայ հրաւիրեցին. յուսալով որ նա էլ այնտեղ կը լինի, գնալը: բայց չեկաւ: Ինչպէս երեւում է փախչում է ինձնից: Բայց ինչու. համոզված եմ որ համակրում է, ինչու է փախչում: Ինչու եկաւ այդ մարդը այստեղ: Մեր ճահճային կեանքում իմ սիրտը խաղաղ էր. ոչ ոք չէր կարողանում յուզել նրան: Այսօր յուզված է այդ սիրտը: նրա համար էր ռուս ընկերուհիս ասում սպասիր. քեզ էլ կը տեսնեմ. քո հպարտ սիրտն էլ կը տրոփի. միայն թող անյայտը երեւան գայ:

Անյայտը եկաւ, սիրտս տրոփեց: Այս խօսքերի վրա Հեղինէն յանկարծ սկսեց ռուսերէն երգել:

—Հեռու աշխարհից եկան սաղերը եւ պղտորեցին Դանուպի կանաչ ջրերը մեղմաղճօտ, սխուր երգը:

Ձայնը հրաշալի էր, ամբողջ սենեակը կածու սկսեց լայ. արտասովոր էր կուսական հպարտ, վերաբերված սիրտը: Արցունքի յտակ կաթիլներ երեւացին Հեղինէի աչքերում եւ մարգարտի հատիկների նման գուրս գլորվեցին:

Այդ բոպէին ներս մտաւ Հեղինէի մեծ քոյր, Թիկին Շուշանը. Հեղինէն ուզեց իրան շտկել. բայց անկարելի էր:

—Ինչու եւ լախ. ինչ է պատահել քեզ. Հեղինէ:

—Ձը գիտեմ քոյրիկ, մի տեսակ տխուր եմ. ինքս էլ չեմ հասկանում թէ ինչ է պատահել, սիրտս ուզում է գուրս թռչել:

—Այո, Հեղինէս, սիրտդ ուզում է գուրս թռչել. եւ գնալ գիտե՞ս ուր, ասե՛մ:

—Ձէ, չէ, մի սաս, չեմ ուզում: Ոչ մի տեղ էլ չի ուզում գնալ. —Երեխայութիւն մի անի, յիմար բաների ետեւից մի ընկնի. մտքիցդ զուրս հանիր այն տեսակ ցանկութիւնները, որոնք իրականանալ չեն կարող:

—Ինչ եւ ասում քոյրիկ չեմ հաս-

կանում քեզ:

—Շատ լաւ եւ հասկանում. վեր կաց գնանք խնամոնց տուն. սիրտդ կը բացվի եւ ամեն ինչ կ'անցնի:

—Ոնամոնց տունը չեմ գնայ. գընում էք գնացե՛ք: Այս տեղ աւելի լաւ է. Բաց չէ քոյրիկ. մի բան հարցնեմ քեզ. մարդի բան չասես. բայց ինձ ուղիղն ասա:

—Հարցրու:

—Տիրոջիդ արեւովը երգվի որ ուղիղը կ'ասես:

—Երգվում եմ, դէ, շուտ ասա: զրուս մի ասանի, մայրիկը ինձ է սպասում:

—Մաղիկեանը ինչպէս տղա է:

—Ձը գիտեմ Հեղինէ ջան. այսօր չափը միայն պիտեմ որ մեր տեսած տղերանց ոչ մէկին էլ չի նմանում: Մաղիկեանի լաւն ու վատը գեռ չը հասկցայ:

Բայց ինչու հարցրիր:

—Այնպէս, ուղիղի քո կարծիքը իմանալ նրա մասին:

—Է՛հ, Հեղինէ, քո կարծիքով մաղիկեանը ինչպէս տղա է:

—Իմ կարծիքով, քոյրիկ, մաղիկեանը շատ... շատ լաւ տղա է:

—Սուս, սուս, աղջի, չես ամաչչում: Ինչի՞ր եւ ասում:

—Ինչ եւ ասում որ, մի թէ չի՞ կարելի սեւի որ մաղիկեանը լաւ տղա է:

—Ձը գիտեմ, աղջի, մեր ժամա-

նակը չէր կարելի սեւի:

—Է՛հ, մեր ժամանակը կարելի է, գոնէ քոյրը:

—Է՛հ, շատ լաւ, ինչու եւ այդքան մաղիկեանի մասի խօսում Հեղինէ. քեզ ինչ, լաւ աղջա է, թէ չէ:

—Ինչպէս թէ ինչու եմ խօսում... բայց դու էլ հասկանում ես թէ ինչ եմ խօսում. ի՞նչ ինձ, քոյր, թող ինձ գնա՛ղուրս. ես էլ չըրիսեմ թէ ինչ եմ խօսում. գնա՛ւ պաշտում եմ... եւ զիս խօսքերը չը վիշտացրած Հեղինէն կեցց կրկին արտասովել, ուղղակի բարձր ծայրում լայ:

Այս միջոցին ներս վազեց փոքրիկ քոյրը, ասնով:

—Հեղինէ, տէր, շուտ. հայրիկը եւ մաղիկեանը միասին եկան. բազում նստեցին. հայրիկը պատերից թէյ տանել այն տեղէ, վա. Հեղինէ ինչու եւ լաց լինում: Հիւանդ ե՞ս:

—Ձէ, չէ հիւանդ չեմ. քնա գուրս հայրիկին ասա որ թէյը շուտով պատրաստ կը լինի:

Մի ակնթարթում Հեղինէի արտասուքը չորացաւ: Աչքերը պարզվեցին ու սաստիկ իրենց սովորական բայց անթի գոնուլիւն արտասայտող փայլը:

—Լաւ, լաւ հասկացայ, Հեղինէ, դու մաղիկեանին սիրում ես, սեց մեծ քոյրը փոքրի գնալուց յետոյ:

—Սուս, սուս, այդ խօսքը մի արտասանի, քոյրիկ, այդ բոտից եւ

ուած է թէ նիքորա Յարը իրենց հողեր պիտի տայ եղբր . և ատոր համար ալ անոնք սկսած են կալուածատէրերէն իրենց խոստացուած հողերը պահանջել :

ԿԱՐԾԵՑԵԱԼ ԶԵՐՈՍԻ ԽԱՀԱԳՈՂՈՒԹԻՒՆԸ

Խօսքս հուշակառք . դժբախտաբար , ձանկիրւեանի մասին է : Վարդուց գիտէի որ այդ մարդը յնշափոխութեան խաշագող է , ու սոցէտ սղգասիրութիւնը իր բնածին խորամանկութեամբ շահագործող մի վարնոց տիպ . գիտէի նաև որ իր տգիտութեան , գոհակութեան և կեղծութեան աստիճանն շատ գերազանցող աստիճանով ամբարտաւան է , բայց այժմ գիտցած իս , երեւակայացած իս էլ եկաւ անցաւ :

Մինչև այժմ չէի ուզում այդ մարդին բոլորովին ջախջախված տեսնել , որովհետև իր գոհակութիւնը ստիպում էր ներողամիտ լինել պէտքի մի մարդ . որին անկողակցաբար յարգանքներ էին արվել , նրան յնշափոխութեան անհաստէր և անկեղծ գիշերորներին մէկը ընդունելով :

Բայց այսօր լուել չի կարելի . ձանկիրւեան յնշափոխութեան խաշագող է . եղել է սկզբից մինչև վերջը , հարկաւոր է նրան իր իսկական տեղը ցոյց տալ : Գիտէք թո՞չ կայ , ընթերցողներ , Ազգային հերոս . ձանկիրւեան , որը շատերի աչքում միա-

միտ , տգէտ և անկեղծ հայրենասէր է երեւացել , այնպիսի մի սուտանայական միջոցի է զիմել իր ամբարտաւանութեան , իր զրոհակ եսին բաւականութեան աւու համար , որ մարդ կը շարի : Իսկ մի խաշագողութիւն է աւրել , որին հազիւ ընդունակ լինեն փարիզի ամենախորամանկ ամենախրիստները :

Ձանկիրւեան , իր Ձեռնիկով , բայց ուրիշի բերնով գրելէ իր յեղափոխական կեանքը , խոշոր ստերով երկինք է բարձրացրել իր անձը , և նոյնքան խոշոր ստերով մրտակ է իր տարան հասկացող մարդկանց . եւ որպէս զի ինքը պատասխանատուութիւնից զերծ մնայ , իր այդ գրեածքը ուղարկել է Գերմանիա որ գերմաներէն լեզուով թարգմանեն և գերմանացու անունով հրատարակեն : Խնդրեմ ասացէք , այսպիսի խաշագողութիւն բացի ձանկիրւեանից ո՞վ կարող է անել :

Ձանկիրւեանի ուրիշի բերնով , իր ձեռքով գրված և Գերմանիա ուղարկված այդ ձեռագիրը 400 երեսից աւելի է , Այսօր մեզ մօտ գտնվում են անմխտելի փաստեր :

Հետաքրքրվող կարող է տեսնել :

ՎԱՐԴՈ



ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

1903ին էջմիածնի Մայր աթոռի 1600 ամեայ յորէլեանը պէտք է կատարուի . այժմուանէ սկսած են պատրաստութիւններ տեսնել այդ տօնախմբութեան համար :

— Կըսուի թէ Մայր աթոռին կալուածները և զպրոցները ետ պիտի տրուին . միայն այն պայմանով որ առևտրէնը հայերէնի չափով պարտաւորիչ կերպով դատարար ամեն կարգի զպրոցներուն մէջ :

Կաթողիկոսը խնդրագիր մը պիտի մատուցանէ Յարին , անոր մէջ յիշելով այս պայմանը :

— Մովսէս եպիսկոպոսի կիրիկիոյ կաթողիկոսի բնտրութեան պատուիրակ պաշտօնը հաստատող գիրը Առիւիէն ընդունուած ըլլալով , մօտ որէն պիտի երթայ Ատանայ :

— Կարսի Արքիմա գրեզին մէջ եկեղեցիին հնութեան բեկորները քանդելով գեղեցիկ մատուռ մը գաւր են հոն :

— Պօլսոյ մէջ ձերբակալուեր է Վահան Թէքեան բանաստեղծ երիտասարդը իր եւրոպայէն վերադարձի միջոցին : Այդ պարունին հակայիշափոխական ըլլալն անգամ զինքը ազատել չը կրցաւ : Ի՞նչ օրինակ առնեն միւս ուսանողները որոնք հակայիշափոխականութիւն կը ծախեն միայն ապահովապէս ծածկատան վերադառնալու նպատակով :

— «Բազմավէպ» կը հաղորդէ որ Պարսկահայոց կրթական գոր-

ծին համար տիկին Վառվառէ Բանանեանց (արգեօք Գանանեանց) և Տիրուհի Պօպօլեան 4000ական բուրլի նուիրեր են :

— Բէթերուպօլի հայ երաժշտագետ Խալիլեան նուագահանդէս մը տալով դափնեայ զսակներու արժանացեր է :

— Վինէտիկի միաբանութեան անդամներէն Հ. Խորէն Վ. Սինանեան Բարիզի աստղաբաշխական ընկերութեան անդամ ընտրուած է :

— Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեան , Ամաէրխանի առաջնորդը , Պատրիարքարանէն իմանալ կուզէ թէ որքեբու արհեստանոցի մը համար ամիսը որքա՞ք ծախք պէտք է . այդ ծախքը հոգալ մտադրեր են Ամաէրխանի ազգայինները :

— Բարիզի մէջ տեղի ունեցեր է հայկական եկեղեցիի հիմնադրութեան հանդէսը ի ներկայութիւն Խալիլեան եպիսկոպոսի , Սուքիաս վարդ . Պարոնեանի և Բիպարեան ու Խնդուեան քահանաներու : Ներկայ եղբւր են եւ ուրիշ ազգայիններ թաղականներու հետ միասին : Եկեղեցին շինողը , Մանթաշով , հիւանդութեան պատճառով չի կրցեր ներկայ ըլլալ :

Բարիզի մէջ կը կարծուի որ եկեղեցին ձմեռը պատրաստ պիտի ըլլայ :

— Անասու Փրանս «Օրօր» թերթին մէջ պերճաբիտ կոչ մը հրատարակեր է Պրիւքսէլի մէջ կայանալիք հայաստանեան ժողովի մասին :

վախենում եմ : Գնա , ևս էլ գայիս եմ . վերջը կը խօսենք այդ մասին , ես էլ գեղ չը գիտեմ , միթէ՞ սէրը այսպէս է երեւան գայիս :

— Կարծեմ , թէեւ ես էլ չը գիտեմ , չը նայելով որ ամուսնացած եմ . Բայց կի՞ սիրում ես , երջանիկ ես . մեզ անս չես ...

— Բայց ես վախենում եմ քոյրիկ . վախենում եմ որ երջանիկ չը լինեմ . Ծաղիկանը լաւ մարդ է . ես դրանում համոզված եմ . հանողված եմ որ ինձ էլ համակրում է . ճիշդ է նրանից ոչ մի բան չեմ լսել , ժամանակ էլ չի եղել գեղ . բայց զգում եմ որ ինձ համակրում է . բայց արի տես որ նա այստեղ չի մնայ . կարելի է հենց այս ամառ այստեղից հեռանայ :

— Այդ մասին մի մտածիր Հեղինէ . կը լինի այն , ինչ որ լինելու է բաւական է որ զգում ես թէ նա էլ քեզ է համակրում . ինձ թուում է որ սիրելը արդէն մի կնոջ համար երջանկութիւն է . Մանուանը եթէ սիրած աղամարդը ալ ժէր ունի , Դէ ես գնամ : Դու էլ շուտ արա դուրս արի . երեսը լաւ , արտասուների հետքերը երեւում են :

Այս ասելով սիկիւր անեակից գոյս եկաւ . իսկ Հեղինէն սկսեց իր արդու զարդը մի քիչ կարգի բերել , մտածելով :

— Չարմանալի բան , մի բուրբօվին անձանօթ , չը գիտեմ աշխարհի որ անկեղծից եկած տղա մի երեք չորս անգամ անեկելովով տիրապետեց իմ սրտին , առանց ճիգ թափելու , և առանց այդ մասին գոնէ մտածելու : Կարծես թէ ես վաղուց , շատ վաղուց ձանաչելիս լինեմ նրան . աւելի չուտքան եղբայրներին : Կէս ժամ առաջ սիրես ճմլվում էր . նրա չիբուսին էր պարծառը . ես երբ իմացայ թէ այս տեղ է , մեզ մօտ է , ուզեմս հենց հիմա կարող տեսնել , այդ ամենը անցաւ : Միբայտ արտփում է ճրճ վառնողով ...

Մինչ Հեղինէն իր կուսական վերջուով մի մէջ պատրաստվում էր իր հուրիւնը տակն ու վրա դարձնող երիտասարդին հանգիստելու , Ծաղիկեանը և Կարմիրովը , գայլուկի հիւս վածքով չը ջապատված զրուցարանի մէջ նստած խօսում էին :

Երեւանի Կարմիրովը շեշտելով ասում էր .

— Ուրեմն ոուս թերթերը սկսել են համակրութեամբ խօսել հայկական հարցի մասին : Այդ լաւ նշան է . պէտք է բնագունել որ առանց ուսուցիչի բազմաքանակ իրազորվել չեն կարող : Բայց խնդրեմ ասացէք , իսկապէս ամենահայ ժողովուրդը ի՞նչ տեսակ ժողովուրդ է . ինձ թվում է որ շուտ է ստիկացած . չայժմուները որոնք անգի են ունենում այն տեղ .

արհեստական են , դրսի մարդկանց գործ . իսկ արհեստական ապստամբութիւնը չուտով կը ճնշվի , հետեւանք չի ունենայ . մանաւանդ երբ դըր սից օգնութիւն չը լինի :

— Ճիշդ էք նկատում . պատասխանեց Ծաղիկեանը . ժողովուրդը արկարացած է . շարժումներն էլ մասամբ արհեստական են , այսինքն արհեստական նրանով որ ժողովուրդին հակացնում են . թէ նրա անտանելի վիճակի բարեփոխման միակ միջոցը ապստամբութիւնն է . Բայց մեծ հաւանականութիւն կայ որ չուտով ժողովուրդը ինքը կընդգրկի ապստամբելու փրկարար գաղափարը :

Ուստաց լրագիրներին ոչ համակրական եւ ոչ էլ հակակրական յօդուածները կարեւորութիւն չունեն . որովհետեւ ոուսական մամուլը միտպետական իշխանութեան սրամաղբորութիւններին եւ գիտաւրութիւններին վրա ոչ մի ազդեցութիւն չի կարող ունենալ : Ռուսաստանում հաստատական կարծիք չը կայ . նա ոչ մի ճնշում չի կարող գործ գնել կատաղարութեան վրա : Եթէ ճիշդն էք ուզում իմանալ . եւրոպայում էլ , ուր բացարձակ միտպետութիւնը այլ եւս գոյութիւն չունի , ուր երկրի թէ արտաքին եւ թէ ներքին գործերը վարում են ժողովուրդի ընտրած մարդիկ , մամուլը այնքան էլ ազդեցութիւն չունի կատաղարութեան սրա .

մաղբորութիւնների վրա : Երբ ու եւ երկրի կատաղարութիւն միջամտում է մի ապստամբ ժողովուրդի դատը սլաւ պանելու համար , այդ միջամտութեան գիտաւր շարժառիթը ոչ այնքան մարդասիրական զգացումները են , որչափ քաղաքական շահերը . Գաղաքական շահերն են թո՛յլ ժողովուրդներին կորստեան պատճառը նոյն շահերն են կրկին որ փրկութեան միջոց են հանդիսանում ճնշվածներին համար :

Ապստամբ ժողովուրդը ինքը պէտք է իրեն համար այնքան ոյժ . ստեղծի եւ այնպիսի մի ծրագրով ընթանայ , որ զօրաւոր պետութիւնների շահերը իր փրկութեան իրողութեան հետ հաշուելու պայմաններում գրվեն :

Ծաղիկեանը հազիւ իր խօսքը վերջացրել էր , երբ Հեղինէն ներս մրտաւ թէ չի մատուցարանը ձեռքին , նա իսկոյն խօսքը կարեց , վեր կացաւ մատուցարանը առու օրիորդի ձեռքից , գրեց սեղանի վրա եւ ողջունելով հարցրեց .

- Ի՞նչպէս էք , օրիորդ :
- Ծաւ լաւ , պարոն Ծաղիկեան , դո՞ւք ինչպէս էք :
- Ես էլ լաւ եմ :
- Հեղինէ , դնա պապիրոս բեր , բաւական լրջութեամբ միջամտեց ձեռքի կարմիրովը :
- Ծաւ լաւ , հայրիկ , այս րոպէս իս :

(Շարունակելի)

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ս

Յուլիան պիտի վերջանայ Սի-
րիոյ նահանգապետին, որը ընտ-
րովի է և քրիստոնեայ պետու-
թիւններուն հակոյութեան տակ,
հինգ տարուան ժամանակամիջո-
ցը:

Սյոմ այդ պատճառով նոր
ընդհարումներ կապատի թուր-
քիոյ, Անգլիոյ և Ռուսիոյ միջև:
Որովհետեւ թուրքիան կուզէ հին
նահանգապետը Ռուսի փաշան
վերջնորոյ: Անգլիան ալ թիկ-
նածու կառավարկէ Մորէլ պէյը,
որ առաջ Լօնտոնի թուրք հիւպա-
տոտարանին առաջին քարտու-
ղարը եղած է:

Իսկ ինչպէս կերելի, Ռուսիան
ալ Անգլիոյ թիկնածուն չի ու-
չեր:

— Խըռիֆը Պոլսէն արդէն
մէկնեւ է Սօֆիայի վրայով:

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ա

Ազգային ժողովը հարկւր 11
ձայնով ընդունեւ է փոխառու-
թեան պայմանները:

Չայն տուած են և ընդդիմա-
դիր կուսակցութեան կարեւոր
անդամներէն:

— Նախարարապետ պ. Տանէֆ
«Թուրքիկ գործարարներուն» թղ-
թակցին յայտարարած է որ
Պուլկարիան անկախ թագաւորու-
թիւն հրատարակելու զրոյցը ան-
հիմն է: Պուլկար հառաջարու-
թիւնը Յարը հանդէսներուն չէ
հրաւիրած, որովհետեւ համոզ-
ուած էր որ Յարը չը պիտի հա-
մաձայնէր զալ:

Միայն Յանքովը, մասնաորա-
պէս իր կողմէն, այդ մտքով քա-
նի մը խօսք ըրած է Յարին, որ-
ուն Յարը պատասխան մը տուած
չէ:

Տանէֆ աւելցուցած է որ Ռուս
կարեւոր շրջանակներու մէջ
պալքաններու խնդիրներու մա-
սին, որոնք կապ ունին Աւստ-
րիական շահերու հետ, մեծ վե-
րապահութեամբ կը խօսին ե-
ղեր:

— Չինուորական այս տարուան
պիւտնէն անցեալ տարուանէն
աւելի չէ:

— Կառավարութիւնը սկսած է
արդէն կոնթրոլէօրներ նշանակել
Պուլկարիոյ ծխախոտները ցու-
ցակագրելու համար:

Չ Ի Ն Ա Ս Տ Ա Ն

Անգլիական թերթերը Շան-
կայէն կիւսանան որ Չինական 18
նահանգներէն 9ը ապստամբ վի-
ճակի մէջ են:

— Չինական կառավարութիւնը
գիմած է հիւսիսային ամերիկա-
յի կառավարութեան որ պետու-
թեանց առջեւ միջամտէ թիէն-
ձինը Եւրոպացի զօրքերէն պար-
պելու համար:

Ս Մ Ե Ր Ի Կ Ա

Ֆիլիպինցի քաղաքական յան-
ցաւորներուն ներքեւ շնորհուելէն
վերջը ազատ արձակուել է նաեւ
Ֆիլիպինցիներու ապստամբա-
պետ Ալուինալտոն:

— Կը լսուի թէ ամերիկեան
կառավարութիւնը Չինաստանի
խոստացեր է թիէնձինը պար-
պելու համար միջամտելու տե-
րութեանց առջեւ:

Ա Ն Գ Լ Ի Ա

Եւրոպական թերթերը կը չա-
ղորդեն թէ թագաւորը կուզէ որ
թագադրութեան օրը շուտ նշա-
նակուի:

— Պրանսական «Լաթէն»
թերթը կը հաղորդէ որ Սոլլպէ-
րի թագադրութենէն յետոյ պի-
տի հրաժարի: Եւ իրեն պիտի
յաջորդէ Պալֆուր:

— Բիշոփները թագաւորին ա-
ռողջական վիճակը վտանգէ
դուրս յայտարարած են:

Իրիկուան տեղեկագիր այլ եւս
չը պիտի հրատարակուի:

— Չէմպրէն կառքէն իյնալով
բաւական ծանր կերպով վիրա-
ւորուել է: Իսկոյն հիւանդանոց
տեղափոխուել են: Վէրքը վտան-
գաւոր չի համարուիր:

Թ Ր Ս Ն Ս Վ Ա Ս Ա

Օրանժի նախկին նախագահ
Շիլէյն ծանրապէս հիւանդ է:
Արդէն Հաղորդութիւն ընդունած
է:

— Գրիկէր նախկին նախա-
գահը Ալթրէիսթի մէջ պիտի
ընդունէր Պօթա, Տէվէթ և Տէ-
լարէյ զօրավարները: Անգլիոյ
հետ լրանակցութեանց մանրա-
մասնութիւնները պիտի հրատա-
րակուին:

Ի Տ Ա Լ Ի Ա

Հոռոմէն կը հաղորդեն թէ՛ կը
վախցուի որ Վէտուվ լեռը ժայթ-
քում մը ունենայ: Իտալիոյ զա-
նազան տեղերը երկրաշարժի
ցնցումներ կը զգացուին:

— Իտալական մամուլը կը
կարծէ որ Իտալիոյ թագաւորին
Ռուսիոյ այցելութիւնը, որ մօ-
տերս տեղի պիտի ունենայ, պի-
տի ամբարցնէ ֆրանս. Իտալական
յարաբնութիւնները:

ԹԱՏՐՈՆ „ՊՈՐԻՍ“

Հաճի՛ Բանաֆօ
Ա մ ա ռ ն ա յ ի ն շ ր ջ ա ն
«Վ Է Ս Է Լ Օ»
Հայ դերասանական խմբին
Վաղը շարաք սիշեր ժամը 9ի6
պիտի ներկայացուի:

Ֆ Ա Ո Ւ Ս Ս

Ողբերգութիւն 4 արարուած և 4
պատկեր:

Կիի՛րԱԿի ԵՐԵՎԱՆԻՆ

Պիտի ներկայացուի:

ԱՆՈՒՐԱԿԵԼԻՆ

Տրախ-Գոմէտի 4 արար և 2 պատկեր

ԵՐԳ ԵՒ ՊԱՐԵՐԲ

Պ.Գ. Յակոբեանի և Օր. Բօզալիի կողմէն

Պ Ա Լ Է Դ

Օրիորդ Բուրասոյի կողմէն

ԿՕՄՍ ՄՕՆԹԷ Բ.ԴՄՍՕ

փորձի դրուած է

ԱՆՁՆԱՍՊԱՆ ՄԵՌԵԱԼԸ

Ֆրանսայի նշանաւոր վեպասաններէն
Ռընէ տը Բօն-ժէի հեղինակութիւնը
եղող, իսկոտ հետաքրքրաշարժ եւ բա-
րոյալից վէպին

Դ Ե Լ Ե Ը թերթերը

հրատարակուեցան:

Գիրքը շարաքը երկու թերթ կը
հրատարակուի եւ իւրաքանչիւր թեր-
թը կը ծախուի 5 սանթիմի: Ամբողջ
գիրքը 24-25 թերթերէ պիտի բաղկա-
նայ:

Վառնայի համար բաժնեկիւն 1 ֆր.:
Ուրիշ քաղաքներու եւ արտասահմա-
նի համար 1.20:

Վառնայէ գուրս, Պուլկարիոյ եւ ար-
տասահմանի համար հինգ թերթ մէկ
ծրարով կը շրջուին: փոսթի ծախքը
հրատարակչին վրայ է: Դիմել հետեւեալ
հասցէին՝ **Imprimerie Orientale**
**Onnik Parseghian, Varna.**
Դրամի փոխարէն նամակագրոյ՛մ ալ
կ'ընդունուի:

ԽՄԲԱԿՐՈՒԹԻՒՆ „ՇԱՐՔՈՒՄ“

Կը սպազարուին ամէն լեզուէ
այցելուածս, հասցէտուած, նամա-
կագրուի, հարսանեկան հրաւի-
րագիր, մահազգ:

Գիրքերը յոյժ գլխաւորապէս լին
Ուրիշ քաղաքներէ եկած
յանձնարարութիւններ ճշգու-
թեամբ և փութով կը կատար-
ուին:

ՅԱՆՁՆԱԿՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԽԻԿ

ԱՆՈՒՇՍԻԱՆ

ՀԱՅԻ ՀԱՍԱՐ

կամ

ԱՂՋԿԱՆ ՄԸ ԹԻՇՍԱԿԱՐԱՆԸ

Վէպ մը իրական կեանքէ
Մամուլ տակ

Այս վէպը որ կը պարունակէ իր
մէջ տեղական կեանքէ զանազան
պատկերներ, հրատարակութեան
յանձնուած է հեղինակին կողմէն և
սիրով պիտի ընդունուին բաժանորդ-
ներ հրատարակութեան դիւրութիւն
ընծայուելու համար:

Բաժնեգիրն է 1 ֆրանք. բոսթի
ծախքը հրատարակչին վրայ:
Տպագրութիւնը աւարտուելու պրո-
քէրը կը յանձնուին բաժանորդներուն:
Գոյանալիք հասոյթը ամբողջովին
կը նուիրուի «Հայկական Կարմիր
Պաշտի Բնկերութեան»:
Բաժանորդագրութեան համար դի-
մել հետեւեալ հասցէին:

Մուրատ Երանոսեան

(Պուլկարիա) ՎԱՌՆԱ

Թ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

«ԲԱՐԿԷՆ ՍԻՒՆԻ» ընթերցարանի
մէջ կը ծախուի Ասոմ Եարճանեանի
«Իւրեցազնօրէն»ը ի նպաստ Հայ Ու-
սանողական Միութեան:
Գիրն է 1 լէֆ արծաթ:
Կը ծախուի նաեւ «Ղարալի Ազա-
տութեան Զանապարհին»:
Գիրն է 90 սանթիմ
Վառնա

Ա Ջ Դ

Մանուկ Տէր Մանուէլեան 55-60
տարեկան սպիտակահեր վաճառ կարճ-
կան Օղվանց գիւղացի, տարիէ մը ի
վեր է Սուլինայէն մեկնած է Ռուսա-
նիոյ Կրայիովայ եւ Գուրուայ-տի-Ար-
ճէլ քաղաքներ և անկից ի վեր անյայտ
եղած է, իրմէ տեղեկութիւն ունե-
ցողներէ կը խնդրուի հաղորդել Սու-
լինա պրն. Մանուէլ Յակոբեանին:

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍ ՄԻՈՒԹԻՒՆ

Եւրոպայի Հայ. Ուս. Միութեան
նամակ ուղարկելու եւ առհասարակ
ամէն տեսակ գիմում ընկելու համար
պէտք է գիմել հետեւեալ հասցէով:

Իւնիոն սե Զ'իլիսիան Արմ.

Լ'Եօրոք րիլ սը Լ'Էֆօլ սը Շիլի 2

Սուիս Ժընէվ

Կարգադիր Յանձնաժողով

L'EUROPEEN

Շարաքաթերթ քաղաքական, մի-
ջազգային իրաւունքի, ընկերակա-
հարցերու, գրական եւ դեղարուես-
տական:

Տարեկան 15 ֆր.

Վեցամսեայ 8 ֆր.

Հասցէ 24 rue Dauphine Paris VI

ОТГОВОРНИКЪ

Мурадъ-Ераносянъ

Печ. Взаимность — Варна